նիկա չունի որ և է արժէք, բայց և այնպէս գիրք է և կտակ է հոգւոյ. և ես արդէն գիրքերու զոհաբերած եմ իմ անձս.

«Իլաքի գիրք տուր վագրֆտբը ճանէ,
Գիրք եօլունա ֆիտա օլմուշէմ զէրէ»։

Բ. Պատասխանելով Գրիգորիս վարդապետի մահուան առթիւ իր մէկ բարեկամ վարդապետին (անունը չի տար) մխիթարական գիրին (Ցաւել. էջ 487–488), սրտաշարժ տողերու մէջ անոր յուղարկաւորութիւնը նկարագրելէ ու իր կորուստը ողբալէ ետք՝ կ'աւելցնէ. «Եթէ քու մեծութիւնդ կ'ուզէ մխիթարել իր սիրելին՝ իբրև միակ սփոփանք թո՛ղ ինձ զրկէ իր անուան յիշատակ եղած Աջպան Տիւանէին Պատմագիրքը, որպէսզի կարևոր կտորները ծաղկաքաղ ընեմ անկէ»։

Ասոնք յատկանշական գիծեր են, որ կ'ապացուցանեն թէ Զէլէպի ի՛նչ աստիճան հետամուտ էր ուսման և սիրահար գիրքերու։

Ո՞րքան նշանակալից է իր առ Ապրոյ Ուղերձին սա խօսքը՝ թէ Ս. Գրոց ուսման մէջ յառաջանալու և իմաստասէրներու աշակերտելու ու անոնց հասնելու տենչը, ըստ Սաղմոսերգուին՝ վճիտ աղբիւրներու ջուրին ծարաւի եղող միեղջերուին նման կը տոչորէ զինք, վասնզի, կը յաւելու, ամէն ինչ կ'անցնի, աշխարհի մեծութիւնները կը խափանուին. միայն ուսումը՝ պանծալի, աննման ու կենդանի՝ կը մնայ վեր ամէն բանէ (Ցաւել. էջ 559–60)։

Վերեւ յիշուած մեր Մատենադարանի թիւ 186 Ձեռագիրը կը պարունակէ Եղիազար կաթողիկոսի նամակներու եւ կոնդակներու եւ իրեն զրկուած գիրերու ու կարգ մը ուրիշ թուղթերու ընդօրինակութիւնը։